FUTURE LEADERS EXCHANGE (FLEX) PROGRAM

ԱՊԱԳԱ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ (FLEX)

FLEX-ը ավագ դպրոցի աշակերտների համար ծրագիր է, որը ֆինանսավորվում է ԱՄՆ-ի կառավարության կողմից: Ծրագրի դիմորդները մասնակցում են երեք փուլից բաղկացած մրցույթի: Հաղթողները 1 ուս. տարի անց են կացնում ԱՄՆ-ում՝ սովորելով ամերիկյան ավագ դպրոցում և ապրելով ամերիկյան հյուրընկալ ընտանիքում: 2018-2019 ուս. տարվա համար ծրագրին կարող են մասնակցել ՀՀ ԲՈԼՈՐ քաղաքացիները, ովքեր՝

- սովորում են 9-12*-րդ դասարաններում և քոլեջների 1-3* կուրսերում, հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է սովորեն 8-12-րդ դասարաններում,
- ունեն լավ կամ գերազանց առաջադիմություն և անգլերենի իմացություն,
- համապատասխանում են ԱՄՆ մուտքի արտոնագիր ստանալու պահանջներին,
- ծնվել են 2000թ. փետրվարի 15-ից մինչև 2003թ. հուլիսի 15-ը:

***12-րդ դասարանում և 3-րդ կուրսում սովորող աշակերտները, ովքեր ենթակա են պարտադիր զինվորական ծառայության, ծրագրին դիմել չեն կարող՝ անկախ տարիքից:**

Շիրակի մարզում քննությունը տեղի է ունենալու **սեպտեմբերի 16-ին, 11:00, Գյումրու # 26 ավագ դպրոցում, Տիգրան Մեծի 27:**

Քննություններին մասնակցելու համար դիմորդները պետք է ներկայանան իրենց քաղաքին/գյուղին մոտ գտնվող քննական կենտրոն և իրենց հետ բերեն ծննդյան վկայական կամ անձնագիր /բնօրինակ/, 3*4 չափի լուսանկար, գրիչ: Դիմորդների քանակն անսահմանափակ է: Նախապես գրանցվելու անհրաժեշտություն չկա:

Ամերիկյան խորհուրդներ Հայաստանում
flex@americancouncils.am
www.americancouncils.am
American Councils Armenia